Հրատարակութիւն ՍԻՀՈՒՆ Մատենաշարի Թիւ 21

ՊԱՇՏՕՆԱ ԽՌՄԲԱԼ Է

(ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐ)

ՎԵՐԱՇԱՒԱՔԵՑ՝

Ք. ԺՊՏՈՒՆԻ

Տպարան Գրատուն Կազմատուն

G. DONIGUIAN

Rue Nahr - St. Michel

Beyrouth, Liban

Հրատարակութիւն ՍԻՀՈՒՆ Մատենաշարի Թիւ 21

"ՊԱՇՏՕՆՍ ԽՈՒՄԲԱԼ Է,,

(ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐ)

ՎԵՐԱՇԱՒԱՔԵՑ՝

Ք. ԺՊՏՈՒՆԻ

Տպարան Գրատուն Կազմատուն

G. DONIGUIAN

Rue Nahr - St. Michel

Beyrouth, Liban

"ՊԱՇՏՕՆՍ ԽՈՄԲԱԼ Է,,

ՏԵՍԻԼ Ա.

ԺԻԻԼ

ԺԻԻԼ.— Ո՜հ, այս ի՞նչ երջանկութիւն է։ Հինգ տարիէ ի վեր չեմ տեսել Մարկուիթը, և ահա այս երեկոյ նամակ մը ստացայ իրմէ։ Տեսէք թէ ինչ է գրել իմ պաշտելին։ (Կը կարդայ) «Սիրելի Ժիւլ, Այս երեկոյ ժամը 10ին եղիր Օպերայում, և ինձ սպասիր թիւ 4 օթեակում։ Մարկուիթ»։ Դեռ ժամը 9ն է։ Երեւակայեցէք թէ մէկ ժամէն պիտի տեսնեմ իմ սիրելին։ Բայց ինչպէս դուրս ելլելու է հոսկէ։ Իմ կինը շատ ու շատ նախանձոտն է, ու ամէն երեկոյ պառկելուց յետոյ գալիս է և նայում թէ մի գուցէ թռած լինիմ իմ վանդակէն։ Բայց անհրաժեշտ է երթալ, անպատճառ գնալու եմ։ Պէտք է մի միջոց խորհիլ։ (Կը խորհի), Էվրէքա՛, գտա՛։ Այո, շատ լաւ միջոց է։ Հիմա կը գտնեմ մի աննկարելի յանցանք, մի պատրուակ և կը գժտուիմ իմ կնոջ հետ, այնպէս որ մէկ մ'ալ չի համարձակուիր գալ իմ սենեակը։ Փորձենք։ (Աւրcցելով անկողինը, կ'սկսի պոռալ) Ինչ խայտառակութիւն է այս, ժամը 9ն է և տակաւին իմ անկողինը չէ շտկած, սա տո՞ւն է թէ դժոխք։ Ոչ, ոչ, կարելի չէ համբերել, պէտք է աւելի խիստ լինիլ։

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՑՆ, ՔԼԷՌ ԵՒ ԿԱՍԹՕՆ

ՔԼԷՌ.— (Մտնելով) Ի՞նչ է պատահեր սիրելիս, ի՞նչ ես դարձեալ բորբոքեր։

ԺԻԻԼ.— (Բարկութեամբ) Սա է պատահել որ միշտ նոյն անկարգութիւնը տիրել է այս տան մէջ։ Ո՞ւր է

գնացել կասթօն, այս ժամուս դեռ անկողինը չէ շրտկած։ Ուզում եմ մի քիչ հանգստանալ և ահա թէ ի՞նչ վիճակի մէջ եմ գտնում իմ անկողինը։

ԿԱՍԹՕՆ.— Պարոն, դեռ մի քիչ առաջ ես չիտկեցի ձեր անկողինը։

ՔԼԷՌ. - Այ՛ո, Ժիւլ, ես ալ ներկայ էի երբ նա չտկեց։

ԺԻԻԼ.— (Մեկուսի) Վայ չար սատանայ։ Ուրիշ փորձելու է։ Լաւ, լաւ, մի անգամ ալ չտկիր։ Ես լաւ եմ զգում որ դուք համաձայնուել էք որ ինձ բարկացնէք, դուք ուզում էք զիս սպաննել։ Տեսէք, տեսէք, հոս բոլոր գիրքերս խառնել են, ով է իրաւունք ստացել խառնել իմ գրքերը։ Զգիտեմ ո՞վ է այս տունի տէրը, ե՞ս թէ դուք։ (Կասթօն կը մեկնի)։

ՔԼԷՌ.— Հանդարտէ սիրելի Ժիւլս, դու ինչ որ պատճառ ես փնտռում բարկանալու։ Այս վայրկեանիս դու ինքդ խառնեցիր գրքերը։ Քենէ գատ ոչ ոք ձեռք չէ դպցուցել քու գոյքերուն։

ԺԻԻԼ.— Լռեցէք, դուք այլեւս չափը անցնում էք, դուք ուզում էք զիս խեղդել, ես դեռ չեմ գժուել, տեսէք, երկու ժամ է որ ուզում եմ մի սիկառ ծխել և լուցկի չեմ գտնում։ Ասոր ալ մի արդարացուցիչ տուր մէնտ գտէք տեսնեմ։ Օ՛ն։

ՔԼԷՌ.— Բայց սիրելի Ժիւլս, ճշմարիտ է որ շատ տարօրինակ էք դառնում։ Տեսէք ահա ես եմ դրել իմ ձեռքով երկու տուփ լուցկի այս սեղանի վրայ։

ԺԻԻԼ.— Սրանք դատարկ են։ (Կը բանայ եւ կը թափէ։ Մեկուսի) Վայ չար սատանայ, այս ալ չի յաջողեցաւ։ Բայց պէտք է մի կերպ պրծիլ այս տեղից։ (Բարձր) Ո՛չ, ո՛չ, ես երբեք չպիտի կարողանամ երջանիկ լինել։ Դուք ամէնքդ աշխատում էք զիս դժբաղդացնել, կորէ՛ք, դուրս գնացէ՛ք, չո՛ւտ։ Ես լաւ եմ հասկանում, այն օրից որ այն պարոնը սկսեց թղթակցիլ քեզ հետ, իմ կեանքը դժբաղդացաւ։

ՔԼԷՌ.— Ի՞նչպիսի պարոն է այդ Ժիւլ։ Ո՜հ, Աստուած իմ, դու գժուել ես, Ժիւլ, դու խելքդ կորուսել

ես։ Սակայն պէտք է գիտնաս որ այդ արարքդ շատ սուղի պիտի նստի քեզ, ու վերջը պիտի զղջաս։

ԺԻԻԼ.— Տեսէք, տեսէք, սպառնալիք է ընում անպիտանը։ Կորսուի՛ր, և մէկ մ'ալ ոտքդ մի կոխեր իմ սենեակը։ Անչնորհք։

ՔԼԷՌ.— Լաւ ես գնում եմ, բայց դու ա'լ չի համարձակուես իմ սենեակը գալ, հասկանո՞ւմ ես։

ԺԻԻԼ.— Ոչ, ոչ, անհոգ եղիր։

ՔԼԷՌ.— Դարձեալ կրկնում եմ, հասկանո՞ւմ ես, չէ համարձակուես գալ իմ ննջասենեակը։ (Կը մեկնի)։

ԺԻԻԼ.— Ոտքերը ջախջախուի ով որ գայ։ Վերջապէս յաջողեցայ։ Խեղճ Քլէռ, որքան սաստիկ բարկացաւ։ Այլեւս վախը անհետացաւ, մէկ էլ չի գար իմ սենեակը, որով ես ալ կարող կը լինեմ այցելութեան երթալ իմ սիրելի Մարգարիթին։ Երթամ մի քիչ զարդարուիմ։ (Ձախ կողմեն կ'անցնի։ Դուռը կը զարնուի) Մտէ՛ք։ (Կրկին) Մտէ՛ք։ (Դարձեալ) Մտէ՛ք։

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՑՆ ԵՒ ԼԻՆԴՈՐ

ԼԻՆ.— (Մտնելով բարեւի կեցած) Կապիտա՛ն։

ԺԻԻԼ.— (Ներսեն) Ով է ա՛ն։

ԼԻՆ.— Ես եմ կապիտան, Լինդորը։

ԺԻԻԼ.— (Ներսեն) Դո՞ւն ես Լինդոր։

ԼԻՆ.— Այո՛, կապիտան, ես եմ Լինդորը։

ԺԻԻԼ.— (Մտնելով) Լաւ ասա տեսնենք Լինդոր, ի՞նչ նորութիւն կայ։

ԼԻՆ.— Առանձին ոչինչ կապիտան, առողջութիւնդ կապիտան։

ԺԻԻԼ.— Լաւ, ասա տեսնեմ, ինչո՞ւ եկար,

ԼԻՆ.— Ես եկայ կապիտան։

ԺԻԻԼ.— Այո, դուն եկար։

ԼԻՆ.— Բայց ո՛չ կապիտան, ես չեկայ։

ԺԻԻԼ.— Ինչպէ՞ս թէ դուն չեկար, տխմար։

ԼԻՆ.— Այսինքն կապիտան ես իմ կամքովս չեկայ։

ԺԻԻԼ.— Հապա՞։

ԼԻՆ.— Գնդապետը կապիտան։

ԺԻԻԼ.— Է՛ ի՞նչ է եղել գնդապետը։

ԼԻՆ.— Գնդապետը զիս ուղարկեց կապիտան։

ԺԻԻԼ.— Ո՞ւր է ուղարկել, պիտի ասե՞ս թէ ոչ։

ԼԻՆ.— Կ'ասեմ, կ'ասեմ, կապիտան, բայց մի աճապարէք որ չի մոռանամ։ Գնդապետը զիս ուղարկեց։ Ո՞ւր։ Ձեզ մօտ։ Այո՛ կապիտան գնդապետը զիս ուղարկեց ձեզ մօտ այս նամակը յանձնելու։

ԺԻԻԼ.— Ինչո՞ւ չես տար երկու ժամէ նամակը անմի՛տ։

ԼԻՆ.— Կամաց կամաց կապիտան։

ԺԻԻԼ.— Ուրիշ ի՞նչ կայ Լինդոր զօրանոցում։

ԼԻՆ.— Առանձին ոչինչ կապիտան։

ԺԻԻԼ.— Զինուորները բոլորն ալ զօրանոցո՞ւմ են։

ԼԻՆ.— Ոչ կապիտան։

ԺԻԻԼ.— Հապա ասա տեսնեմ ո՞վ է մնացել դուրսը այս ժամուս։

ԼԻՆ.— Մի բարկանաք կապիտան, ես իմ կամքով չէ որ մնացել եմ դուրսը, գնդապետն է ուղարկել։

ԺԻԻԼ.— Այդ գիտեմ տխմար։ Քենէ զատ բոլորն ալ զօրանոցո՞ւմ են։

ԼԻՆ.— Այո՛ կապիտան, բոլորն ալ, բացի Բուռլօնից։

ԺԻԻԼ.— Ասա տեսնեմ, ուր է գնացել Բուռլօնը։

ԼԻՆ.— Բուռլօնը կապիտան, այնքան շատ, այնքան շատ էր հարբել որ թաւալում էր խոզի նման կապիտան։ Իսկ տասնապետը նրան բանտարկեց կապիտան։

ԺԻԻԼ.— Շատ լաւ է արել։ Իսկ դու Լինդոր, դու չե՞ս խմում։

ԼԻՆ.— Ես կապիտան, ես խմում եմ կապիտան, բայց միայն ջուր եմ խմում կապիտան։

ԺԻԻԼ.— (Մեկուսի) Իրաւ որ շատ զուարճալի մարդ է, և ի՛նչ տխմար։

ԼԻՆ.— Այո կապիտան։

ԺԻԼ.— Բայց ժամանակը անցնում է և պէտք է երթալ։ Ո՜հ, ինչ լաւ գաղափար մը յղացայ։ Օ՜հ հիանալի։ Արի սրուոր իմ գիշերանոցս և գտակս հագցնեմ թող պառկի իմ անկողնում։ Տիկինն ալ եթէ գայ, պիտի կարծէ թէ քնացել եմ, և պիտի մեկնի։ Ճիշդ ալ յարմար է ատանակը։

ԼԻՆ.— Լաւ, ես գնա՞մ կապիտան։

ԺԻԼ.— Սպասի՛ր Լինդոր։ Մօտ եկու տեսնեմ։

ԼԻՆ.— Հրամայեցէք կապիտան։

ԺԻԼ.— Ասա տեսնեմ Լինդոր, դու կարո՞ղ ես խրոմբացնել։

ԼԻՆ.— Խոմբացնե՞լ։ Ինչպէս թէ խոմբացնել կապիտան։

ԺԻԼ.— Հապա պարզապէս խոմբացնել։

ԼԻՆ.— Լաւ, ասենք թէ խոմբացրի, յետոյ։

ԺԻԼ.— Խոմբացրու տեսնեմ։

ԼԻՆ.— Ո՛չ կապիտան, չեմ կարող ձեր ներկայութեանը խոմբացնել։ Ամօթ է։

ԺԻԼ.— Բայց փոյթ չէ, ես քեզ հրամայում եմ խրոմբացրու։

ԼԻՆ.— Կապիտան, եթէ ուզում էք երթամ Բուռլօնը ուղարկեմ։ Նա երբ հարբած է լինում, ճիշդ որ խոզի նման է խոմբացնում։

ԺԻԼ.— Ինձ Բուռլօնը չէ հարկաւոր, դու խոմբացրու ապա թէ ոչ քեզ կը բանտարկեմ։ Հասկանո՞ւմ ես։

ԼԻՆ.— Ոչ, ոչ կապիտան կը խոմբացնեմ։

ԺԻԼ.— Ուրեմն սկսիր։

ԼԻՆ.— Խռ, խռ, խռ։

ԺԻԼ.— Օ՜հ, օ՜հ, հիանալի, հիանալի։ Լաւ հիմա գնա պառկիր։

ԼԻՆ.— Գլխուս վրայ կապիտան։ (Դէպի դուռը կ'երթայ)։

ԺԻԼ.— Ո՞ւր ես գնում Լինդոր։

ԼԻՆ.— Զօրանոց կապիտան։

ԺԻԼ.— Ի՞նչ ընելու։

ԼԻՆ.— Պառկելու կապիտան։ Կապիտանը հրամայեց որ գնամ պառկիմ կապիտան։

ԺԻԼ.— Բայց ո՛չ, ապուշ, պէտք է հոս պառկես։

ԼԻՆ.— Այդ ինչպէս կապիտան։

ԺԻԼ.— Այո, պէտք է հոս պառկես, իմ անկողնում։

ԼԻՆ.— Ո՛չ, ո՛չ, ո՛չ, կապիտան, մի պնդէք, ես չեմ կարող անել այդ բանը։ Երբե՛ք։

ԺԻԼ.— Զէ՞ որ ես հրամայում եմ քեզ Լինդոր։

ԼԻՆ.— Ոչ, ոչ, կապիտան, գուցէ մի ուրիշ զինուոր համարձակուի, բայց ես չեմ կարող ձեզ հետ մէկ վերմակի տակ պառկել։

ԺԻԼ.— Բայց ո՛չ, տխմար, ես չպիտի պառկիմ, միայն դու պիտի պառկիս իմ անկողնում և խոմբացնես։

ԼԻՆ.— Իսկ դուք կապիտան։

ԺԻԼ.— Ես գնում եմ զօրանոց։ Գնդապետը ինձ է կանչել։

ԼԻՆ.— Ա՞յս ժամուս կապիտան։

ԺԻԼ.— Այո՛։

ԼԻՆ.— Գնդապետը քնացած է կապիտան։

ԺԻԼ.— Այդ քեզ չէ հարկաւոր, կատարիր ինչ որ քեզ հրամայում եմ։ Շո՛ւտ հանուիր. ապա թէ ոչ քեզ կը բանտարկեմ։

ԼԻՆ.— Կամենաք բանտարկեցէք կապիտան, կամենաք կախաղան հանեցէք։ Ես չեմ աներ այդ։ Անվայել է մի զինուորի իւր կապիտանի ներկայութեանը հանուել։

ԺԻԼ.— Լաւ մի հանուիր, միայն գտակս գլուխդ դիր և պառկէ։ Բայց լաւ մտիկ ըրէ ինչ որ պիտի ըսեմ։ Վերմակը քաշիր գլխուդ և խոմբացրու։

ԼԻՆ.— Կապիտան, քնեմ այնպէս խոմբացնեմ թէ արթուն խոմբացնեմ։

ԺԻԼ.— Ապուշ, ինչպէս ուզում ես այնպէս խոմբացրու, միայն թէ խոմբացրու հասկցա՞ր Լինդոր։

ԼԻՆ.— Այո՛, կապիտան, միայն թէ խոմբացնեմ։ (Կը պառկի եւ կը խոկայ)։

ԺԻԻԼ.— Դեռ հիմա չէ, երբ ես մեկնիմ։ Երբոր ծառան կամ ուրիշ մէկը ներս մտնէ, բնաւ չես խօսիր և կը խռմբացնես հասկցո՞ր։

ԼԻՆ.— Այո՛, կապիտան։ Իսկ եթէ տիկինը գայ կապիտան, դա՞ր ձեռալ խռմբացնեմ։

ԺԻԻԼ.— Բայց հարկաւ։ Մասնաւորաբար եթէ տիկինը գայ պէտք է խռմբացնես։ Եւ վայ քեզի եթէ բառ մը փախցնես բերնէդ, քեզ կ'սպաննեմ։

ԼԻՆ.— Հասկցայ կապիտան, հասկցայ, զիս կ'սպաննէք։ Ահա կը խռմբամ, խը՛ռ։ խը՛ռ...։

ԺԻԻԼ.— (Մեկուսի) Լաւ պիտի կատարի իւր դերը այս ապուշը։ Ես երթամ, ժամանակն է արդէն և Մարկուիթ ինձ է սպասում Օպերայում։ (Կը մեկնի)։

ԼԻՆ.— Այս ինչ փորձանքն ընկայ Տէր Աստուած, եթէ յանկարծ քունս տանի և չի խռմբացնեմ, կապիտանը զիս սպաննել կուտայ։ Ով Սուրբ Բեռնարդոս, դուն զիս մի քնացներ։ Բայց կարծեմ մէկն է գալիս, խռմբացնեմ, խը՛ռ, խը՛ռ...։

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՑՆ ԵՒ ԿԱՍԹՕՆ

ԿԱՍ.— (Մօնելով ձեռքը սրուակ եւ բաժակ) Տէր իմ, ահա լիմօնատդ և բաժակը։ Հոս կը դնեմ։ (Մեկուսի) կ'երեւի քներ է, խեղճը այնքան բարկացաւ որ քունը տարել է. (Բարձր) Ես կը մեկնիմ պարոն, եթէ բանի մը պէտք ունենաք, զանգը սեղանին վրայ է։ (Կը մեկնի)։

ԼԻՆ.— (Ելնելով) Ի՜նչ, լիմօնա՜տ, այդ ի՜նչ հրաշալի բան. արդեօք մէկ մը խմե՞մ կ'ըսէք։ Բայց ոչ, ոչ, ինչուս պէտք։ Ախ, ինչքան ալ ծարաւ եմ։ Հոգս, ինչ կ'ուզէ թող լինի, ես պիտի խմեմ, թող քանի մը վայրկեանի համար ալ ես կապիտան լինեմ։ (Կը խմէ) Օ՜խ, սիրտս հովացաւ։ Եկ մէկ էլ խմեմ (Կը խմէ)։ Այս ալ վերջը։ Ճիշդ որ աւանակ պատերազմին դաշտը, կրակի առջեւ դուն գնա, իսկ այս տեսակ հրաշալի հեղուկները կապիտանները խմեն։ Բայց կարծեմ ձայն կայ, խը՛ռ, խը՛ռ...։

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՑՆ ԵՒ ՔԼԷՌ

ՔԼԷՌ.— (Մտնելով նրագով) կ'երեւի քներ է, իմ խեղճ Ժիւլս, որքա՜ն բարի է։ Ժիւլ, սիրելի Ժիւլ, արի հաշտուենք, ես չեմ կարող քեզ պէս ամուսնի հետ երկար գժտուած մնալ։ (Կը համբուրէ) Աղաչում եմ, արի՛, հաշտուենք։ Պարապ տեղը քնած մի ձեւացնել, Ժիւլ, չես կարող զիս խաբել։ Զարթի՛ր, զարթի՛ր։ Զե՜ս զարթնում հա՛, վեր կա՛ց, ապա թէ ոչ անկողինը կ'այրեմ։

ԼԻՆ.— (Սարսափած վեր ցատկելով) Աստուծոյ սիրոյն, մի այրեր տիկին, կը վեր կենամ։ Խռ, խռ, խռ։

ՔԼԷՌ.— Ո՜հ, Աստուած իմ օգնութի՜ւն, այս ո՞վ է։ Գող կայ, գող։

ԼԻՆ.— Ոչ տիկին, ես գող չեմ, խռ, խռ, խռ։

ՔԼԷՌ.— Բայց ո՞վ ես դուն, ինչո՞ւ եկար հոս, ասա՛, խօսէ։

ԼԻՆ.— Չեմ կարող խօսել տիկին, արգիլուած է, խռ, խռ, խռ։

ՔԼԷՌ.— Դուրս ասկէ ապիրատ, դուրս չուտ։

ԼԻՆ.— Սպասիր տիկին, խռ, խռ։ Անկարելի է տիկին, խռ, խռ։

ՔԼԷՌ.— Դուրս չուտով դուրս, ապա թէ ոչ կը պոռամ։

ԼԻՆ.— Մի պոռար տիկին կ'երթամ, բայց թէ ո՞ւրտեղից, դուռը գոց է։

ՔԼԷՌ.— Աճապարէ, դուրս թռիր ապա թէ ոչ քեզ կը սպաննեմ։ (Գրեթէ եւայլն վրան կը նետէ)։

ԼԻՆ.— Դուրս թռիմ, դուրս թռիմ, բայց ո՞ւսկից թռիմ, թէ որ մէջքս կոտրեմ։

ՔԼԷՌ.— Պատուհանից, դո՛ւրս։

ԼԻՆ.— Բայց թէ ո՞ւր դուրս կգամ այս պատուհանից։

ՔԼԷՌ.— Փողոցը։

ԼԻՆ.— Իսկ այնտեղի՞ց։

ՔԼԷՌ.— Ջահաննամը։

ԼԻՆ.— Մտիկ ըրէ տիկին։ Ես հոս պառկած էի և ի

կարգին խոմբացնում։ Եթէ ուեւէ բան պատահի պատասխանատուն դուք էք։

ՔԼԷՌ.— Դուրս եմ ասում, դուրս, ապա թէ ոչ...։

ԼԻՆ.— Գնում եմ, գնում եմ տիկին։ (Կ'երթայ դէպի պատուհանը, վայրկեան մը կ'անհետանայ։ Դրսէն շունի հաչոցներ, դարձեալ կ'երեւի)։ Տիկին այն երկու գաղանները կը թողո՞ւն որ երթամ, զիս պիտի բզկտեն։ Ո՛չ, ո՛չ, ինչ ուզում ես ասա, ես ինձ տրուած հրամանը պիտի գործադրեմ։ Ես պէտք է պառկիմ և խոմբացնեմ խռ, խռ։(Կը պառկի)։

ՔԼԷՌ.— Այս ի՞նչ փորձանք է Տէր Աստուած, անչընորհք ամուսինս տեսէք թէ ինչպիսի մէկը թողեր է իւր տեղ։ Բայց ո՞վ ես դուն, ինչո՞ւ եկար հոս, ո՞ւրկէ եկար։ Ի՞նչ կը նշանակէ այս։ Ո՜հ, հիմա կը հասկնամ։ Դուն այն պարոնն ես, որ երկար ատենէ ի վեր կ'ուզէ զիս մոլորեցնել։ Բայց պէտք է գիտնաք որ անամօթ պարոն, ձեր գործած արարքը ոճիրէ մը աւելի ծանր է, և ես ձեզ պիտի խայտառակեմ հրապարակաւ։

ԼԻՆ.— Անամօթ, պարո՛ն, ե՞ս։ Շիտակը չեմ հասկանում։ Խռ, խռ։

ՔԼԷՌ.— Բայց ո՞վ ես դուն եթէ պարոնը չես։ Ի՞նչ ես անում այստեղ։

ԼԻՆ.— Զէք տեսներ խոմբացնում եմ։ Խռ, խռ։

ՔԼԷՌ.— Ինչո՞ւ, ո՞վ է հրամայել քեզ։

ԼԻՆ.— Տիկին խնդրեմ, մի բարկանաք, ես չեմ կարող խօսել, վերջը կը գնդակահարէ զիս։

ՔԼԷՌ.— Ո՞վ, ինչո՞ւ համար։

ԼԻՆ.— Արգիլուած է ասում եմ Տիկին։ Կապիտանը արգիլեց, ասաց որ զիս սպաննել կուտայ եթէ չի խոմբամ։ Բայց չեմ կարող ասել, չեմ կարող։ Խռ, խռ։

ՔԼԷՌ.— Ուրեմն ժիւլը պատուիրեց քեզ խոմբացնել հա՞։

ԼԻՆ.— Այո՛ տիկին։ Կապիտանը ասաց որ հոս պառկիմ, և ով որ գայ չգայ խոմբացնեմ, և եթէ տիկինը

գայ, աւելի խոմբացնեմ։ Բայց մի ասէք իրեն, վերջը զիս կ'սպաննի։ Խռ, խռ։

ՔԼԷՌ.— Այդպէ՞ս ըսաւ։ Իսկ ինքը ուր գնաց գիտե՞ս։

ԼԻՆ.— Ասաց որ զօրանոց էր գնում, բայց կարծեմ սուտ է։

ՔԼԷՌ.— Բայց դու ո՞ւրկէ եկար, և ո՞վ ես։

ԼԻՆ.— Ե՞ս տիկին, ես ես եմ։

ՔԼԷՌ.— (Մեկուսի) Իրաւ որ տխմար է։ (Բարձր) Դու ո՞վ ես, անունդ ի՞նչ է։

ԼԻՆ.— Ե՞ս տիկին, ես Լինդորն եմ։

ՔԼԷՌ.— Լինդորը ո՞վ է։

ԼԻՆ.— Լինդորը 4րդ գունդի զինուորն է։

ՔԼԷՌ.— Դու զինուոր ես։ Այս ինչ անհասկնալի առեղծուած է Տէր Աստուած։ Հապա ժիւլը ո՞ւր է գնացել այս ատեն։ (Սեղանին վրայ նամակը նշմարելով կ'առնէ եւ կը կարդայ). «Սիրելի ժիւլս, այս երեկոյ ժամը 10ին ելղիր Օպերայում և ինձ սպասիր թիւ 4 օթեակում։ Մարկըռիթ»։ Ո՜հ, դաւաճան, հիմա կը հասկնամ նիւթած դաւդ։ Ո՜հ, Աստուած իմ, դէչ եմ զգում ինձ։

ԼԻՆ.— Մի՛ վախենաք տիկին, ես հոս եմ։ Առ մի քիչ լիմօնատ խմիր կը լաւանաս։ Չե՞ս ուզում, աւելի լաւ, ես կը խմեմ։ Քո կենացդ տիկին։ Լաւացա՞ր տիկին, լիմօնատ խմեցի։

ՔԼԷՌ.— Օպերայում, Մարկռիթ որքան դժբաղդ եմ։

ԼԻՆ.— Մի՛ տխրիք տիկին, կ'անցնի։

ՔԼԷՌ.— Լաւ, Լինդոր, պատմիր, մի ուեւէ բան պատմիր։ Ո՛հ, կը խեղդուիմ։

ԼԻՆ.— Մի խեղդուիք տիկին, կը պատմեմ, կը պատմեմ բայց ի՞նչ պատմեմ։

ՔԼԷՌ.— Պատմի՛ր, պատմի՛ր, ի՞նչ կայ զօրանոցում։

ԼԻՆ.— Առանձին ոչինչ տիկին։ Հա՛, լաւ միտքս ընկաւ։ Զօրանոցում կայ մի զինուոր Բուռլօն անունամբ։

ՔԼԷՌ.— Լաւ. պատմիր Բուռլօնի մասին։

ԼԻՆ.— Պատմեմ տիկին պատմեմ։ Բուռլօնը միշտ հարբած է լինում, և տասնապետը նրան բանտարկեց տիկին։

ՔԼԷՌ.— Օպերայում, Մարկուի՞թ։

ԼԻՆ.— Կարծեմ թէ տիկինը փախցրեց։

ՔԼԷՌ.— Լինդո՛ր, դու գիտե՞ս երգել։

ԼԻՆ.— Ինչպէս չէ տիկին, թէ՛ կ'երգեմ և թէ կը պարեմ։

ՔԼԷՌ.— Լաւ երգիր ու պարիր տեսնեմ։

ԼԻՆ.— Շատ լաւ տիկին։ (Կ'երգէ եւ կը պարէ)։

ՔԼԷՌ.— Ո՜հ, ի՞նչ լաւ կ'երգես և կը պարես Լինդոր։

ԼԻՆ.— Հաւնեցար տիկին, լաւ պարեցի՞։

ՔԼԷՌ.— Այո՛, շատ լաւ, շատ լաւ։

ԼԻՆ.— (Մեկուսի) Կեցցե՜ս Լինդոր, կեցցես։ Մարդ ոչ ուտի, ոչ խմի, այսպիսի տիկնոջ քով երգի ու պարի։ (Բարձր) Բայց Տէր Աստուած, ի՜նչպէս մոռցայ։ Ինձ հրամայուած էր չի խօսիլ և միայն խռմբացնել։ (Անկողին կը մտնէ եւ կը խռկայ)։

ՔԼԷՌ.— Ի՞նչ եղաւ քեզ Լինդոր։

ԼԻՆ.— Թողէք տիկին Աստուծոյ սիրոյն թողէք, պէտք է որ խռմբացնեմ։

ՔԼԷՌ.— Ոտնաձայներ կան։ Կարծեմ ժիւլն է գալիս։ Քաշուիմ իմ սենեակը, և իրեն լաւ դաս մը տամ։ (Կ'երթայ)։

ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՑՆ ԵՒ ԺԻԻԼ, ՑԵՏՈՑ ՔԼԷՌ

ԺԻԻԼ.— (Մտնելով) Աւա՜ղ, որքան յուսախար եղայ։ Որքան փոխուել է Մարկուիթը։ Բնաւ չէ յիշեցնում նախկին օրերը։ Որքան անմտութիւն արի պատասխանելով իւր հրաւէրին։ Մեղք։ (Նշմարելով Լինդորը որ կը խռկայ) Այս աւանակը դեռ կը խռմբացնէ։ Տէր Աստուած որ կինս եկած չը լինէր։ Արթնցնենք սա տխմարը։

ՔԼԷՌ.— (Ներս մտնելով) Դեռ չե՞ս քնել Ժիւլ։

ԺԻԻԼ.— Ո՛չ, ի՞նչ ես եկել հոս։

ՔԼԷՌ.— Այդ ի՜նչ խոժոր դէմք է Ժիւլ։

ԺԻԻԼ.— Կը հարցնե՞ս։

ՔԼԷՌ.— Բայց չէ՞ մի որ քեզ հետ հաշտուեցինք։

ԺԻԻԼ.— Ո՞վ է հաշտուել։ Ես քեզ հետ չեմ հաշտուիր։

ՔԼԷՌ.— Ինչպէս թէ ով է հաշտուել։ Դեռ քիչ առաջ չի՞ հաշտուեցի՞նք քեզ հետ։

ԺԻԻԼ.— Տխմար բաներ մի ըսեր։ Ես քեզ չեմ տեսել։

ՔԼԷՌ.— Իրաւ որ դու խելքդ կորուսել ես, և կամ թէ մութ լինելուն չես նշմարել։ Միթէ սրանից կէս ժամ առաջ քեզ հետ չի՞ հաշտուեցի՞նք քու անկողնում։

ԺԻԻԼ.— Անէ՜ծք, ո՞վ երկինք, ես իմ ձեռքովս քանդեցի իմ տան երջանկութիւնը։ Վա՜յ ինձ։

ՔԼԷՌ.— Կը տեսնեմ որ հանգստի պէտք ունիս Ժիւլ։ Գիշեր բարի։ Վաղը առաւօտ կը տեսնուինք։ (Կը մեկնի)։

ԺԻԻԼ.— Ի՜նչ ըրի Տէր Աստուած, ի՜նչ յիմարութիւն գործեց այս անբան անասունը։ Ինչ դժոխքի մէջ ձգեց զիս։

ԼԻՆ.— Խռ, խռ։

ԺԻԻԼ.— (Զարնելով) Դեռ կը խռմբացնե՞ս անճոռնի՛։ Վեր կա՛ց, քեզի ապուշ, տխմար, խայտառակ։

ԼԻՆ.— (Վեր ելնելով) Հրամայեցէք կապիտան։

ԺԻԻԼ.— Լաւ խռմբացրի՞ր, անասո՛ւն։

ԼԻՆ.— Հիանալի կապիտան, այնպէս որ ամէն մարդ զարմանում էր։

ԺԻԻԼ.— Շիտակ ըսէ ապիբատ իմ գնալէս յետոյ, ո՞վ եկաւ հոս։

ԼԻՆ.— Ոչ ոք կապիտան։

ԺԻԻԼ.— Ճիշդ ըսէ ստախօս, ապա թէ ոչ հիմա քեզ կը խեղդեմ։ (Կոկորդեն կը բռնէ)։

ԼԻՆ.— Թողէք ըսեմ կապիտան, ծառան եկաւ լիմօնատ բերեց։

ԺԻԻԼ.— Ուրի՛շ, ուրի՛շ։

ԼԻՆ.— Ուրի՛շ, ուրի՛շ, ի՞նչ ուրիշ կապիտան։

ԺԻԻԼ.— Շո՛ւտ ըսէ, ուրիշ մարդ չեկա՞ւ։

ԼԻՆ.— Ուրիշ, այո, չեկաւ, ոչ, եկաւ, կապիտան։

ԺԻԻԼ.— Պիտի ասես թէ ոչ, քեզ կ'սպաննեմ։

ԼԻԿ.— Եկա՛ւ եկա՛ւ, տիկինը եկաւ, բայց ես այնպէս խռմբացնում էի կապիտան։

ԺԻԻԼ.— Տիկինը եկաւ ի՛նչ ըրաւ, շուտ ասա, շուտ։

ԼԻՆ.— Տիկինը եկաւ կապիտան, այսինքն առանձին չեկաւ կապիտան։

ԺԻԻԼ.— Հապա որու հետ եկաւ ըսէ տեսնեմ։

ԼԻՆ.— Տիկինը եկաւ կապիտան, ճրագին հետ եկաւ կապիտան, մօտեցաւ կապիտան, զիս չոյեց կապիտան, փայփայեց կապիտան և վերջապէս համբուրեց կապիտան։

ԺԻԻԼ.— Ի՞նչ, խայտառակ, ինչպէս կը համարձակուես ըսել։ (Կ'ուզէ ծեծել)։

ԼԻՆ.— Թողէք, թողէք, օգնութիւն մեռա՜յ։

ԺԻԻԼ.— (Թողլով) Շուտ ասա, յետոյ ի՞նչ եղաւ, շուտ։

ԼԻՆ.— Յետոյ կապիտան, յետոյ ասաց որ վեր կաց, եթէ ոչ վարագոյրները կրակի կը տամ ասաց կապիտան։ Ես կապիտան, վախցայ կապիտան, վեր կացի կապիտան։ Բայց ես այնպէս խռմբացնում էի կապիտան։

ԺԻԻԼ.— Գետինն անցնի խռմբացնելդ, ուրիշ ինչ ասաց պատմի՛ր, շո՛ւտ։

ԼԻՆ.— Ուրիշ ասաց որ կապիտան, առանձին ոչինչ չասաց կապիտան։ Սակայն կապիտան, առաջ կարծեց որ ես պարոնն եմ կապիտան։ Եւ ասաց որ դուրս ելլեմ կապիտան։ Բայց ես այնպէս էի խռմբացնում որ չէի թողնում նրան խօսել կապիտան։

ԺԻԻԼ.— Յետոյ, յետոյ, ինչ ասաց։

ԼԻՆ.— Յետոյ, ասացի թէ ես պարոնը չեմ, ասաց «ուրեմն դու ո՞վ ես», ասացի «ես ես եմ», ասաց «դու

ո՞վ ես», ասացի «ես Լինդորն եմ», ասաց «Լինդորը ո՞վ է», ասացի «Լինդորը 4րդ գնդի զինուորն է, հէնց որ իմացաւ թէ զինուոր եմ, սկսեց աւելի մեղմ վարուել հետս։

ԺԻԻԼ.— Դեռ կը համարձակուե՞ս խօսիլ վատ, ըստորին, դաւաճա՛ն, դու անճոռնի արարած (վզէն կը բռնէ)։

ԼԻՆ.— Օգնութի՛ւն, սատանաներ, օգնութիւն, դըժողքն ընկայ։

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՑՆ ԵՒ ՔԼԷՌ

ՔԼԷՌ.— (Մտնելով) կեցի՛ր, ժիւլ դուն իրաւունք չունիս պատժել այդ խեղճ զինուորը, որ պարզապէս քու քմահաճոյքիդ խաղալիքն ես ըրեր։

ԼԻՆ.— Այո՛ տիկին, այո՛։

ՔԼԷՌ.— Հոս եթէ յանցաւոր մը կայ ժիւլ, այն ալ դուն ես, և առաջին անգամ դուն պէտք է պատժուիս։ Տե՛ս սա նամակը, տես և ամաչէ՛ գործած խայտառակութեանդ համար։

ԼԻՆ.— Ի սէր Աստուծոյ տիկին, զիս կ'սպաննէ։

ՔԼԷՌ.— Մի վախնար Լինդոր, դու չես պատժուիր։

ԺԻԻԼ.— Այո՛, Քլէռ, կ'ընդունիմ սխալս և արդէն զղջացած եմ։ Ներողութիւն կը խնդրեմ։

ԼԻՆ.— Կապիտան ներիր ինձ մի բանտարկիր, մի սպաննիր ինձ։ Ես միշտ խռմբացրի, հարցրէք տիկնոջ, եթէ կ'ուզէք դարձեալ խռմբացնեմ։

ԺԻԻԼ.— Լսիր Լինդոր, եթէ տիկինը ինձ ների, ես ալ քեզ կը ներեմ, հասկցա՞ր։

ԼԻՆ.— Տիկին ի սէր Աստուծոյ ներիր զայն և ազատիր զիս կախաղանէն։

ՔԼԷՌ.— Այո՛, ժիւլ, կը ներեմ քեզ, բայց պէտք

է խոստանաս որ մէկ մ'ալ այդպիսի բան պէտք չէ պատահի։

ԺԻԻԼ.— Այո՛, Ֆլէռ, կը խոստանամ, ես գլուխս քարին եմ գցել թէ որ մէկ մ'ալ այսպիսի արարքի մէջ գտնուիմ։

ԼԻՆ.— Ես էլ գլուխս քարին եմ գցել որ մէկ մ'ալ ուրիշի տեղ խռմբացնեմ։

ՎԵՐՋ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԺԻԻԼ = Հարիւրապետ

ՖԼԷՌ = Կինը

ԼԻՆԴՈՐ = Զինուոր

ԿԱՍԹՕՆ = Ծառայ

ՍԻՀՐԻՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

		Լ. Դ.
1.—	ՏՐՈՎԱԴԱՑԻ ՀՐԴԵՀԸ	100
2.—	ԹՈՐՈՍ ԾԱՌԱՅ	75
3.—	ՄԵՐ «ԱՄԱԹԷՕՐ»ՆԵՐԸ	100
4.—	ՀԱՅ ԴՊՐՈՑԸ	100
5.-	ԽԵՉՈՒՆ ԹՈՒՋԸ	50
6.—	ԱՒԱՐԱՅՐԻ ԱՐԾԻՒԸ	150
7.—	ԵՐԿՈՒ ԽՈՒԼԵՐ	50
8.—	ԱՍԻԱՅԻ ՍԱՓՐԻՉԸ	50
9.—	ԴԴՈՒՄԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ	75
10.—	ՍԱՏԱՆԱՅ	40
11.—	ԹԻՔ ԹԱՔ	75
12.—	ՄՈԼՈՐԵԱԼ ՃԱՄԲՈՐԴԸ	50
13.—	ԿԱՌՔԻ ՄԸ ԱՌԿԱԾԸ	50
14.—	ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ	50
15.—	ԻՏԷԱԼ ՄԸ	50
16.—	ՉՈՐՍ ՍԱԼՈՐՆԵՐԸ	30
17.—	ՍԵՒ ԹԷ ՃԵՐՄԱԿ	30
18.—	ԵՐԿՈՒ ԾԱՑՐԱՑԵՂՆԵՐ	100
19.—	ԵՐԵՔ ՔԱՋԵՐ	75
20.—	ԱԿԱՄԱՅ ՄԵՌԵԼՆԵՐԸ	50
21.—	ՊԱՇՏՕՆՍ ԽՌՄԲԱԼ Է	50

Կ. Տօնիկեան Գրատունը կը հայթայթէ ամէն տեսակ գիրքեր, կը կատարէ փոխանակութիւն՝ գրավաճառ եւ հեղինակներու հետ, իր սեփական հրատարակութիւններով։

ԳԻՆ՝ 50 Լ. Դ.